ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)

ԱՌՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Քաղաքացիական հասարակությունն առանցքային դեր է կատարում ժողովրդավարության, իրավունքի գերակայության ապահովման, որոշումներ կայացնելիս հասարակական տարբեր շերտերի շահերը ներկայացնելու գործընթացներում, որոնք հասարակության կայուն զարգացման կարևորագույն նախապայմաններ են[1]: Քաղաքացիական հասարակությունը բնութագրվում է որպես պետական կառավարման մարմիններից և շուկայական հարաբերություններից դուրս մի տարածք, որն ստեղծվում է անհատների և կոլեկտիվների, կազմակերպությունների ու ինստիտուտների կողմից՝ հանրային շահը պաշտպանելու համար[2]:

«Քաղաքացիական հասարակություն» հասկացությունը առաջին անգամ օգտագործվել է Եվրոպայում 16-րդ դարում, սակայն որպես հասարակագիտական կատեգորիա հանդես է եկել 18-րդ դարում[3]: Ինչպես նշել է Հեգելը, քաղաքացիական հասարակությունում ամեն ոք ինքն իր համար նպատակ է, իսկ մյուսները՝ նրա համար ոչինչ, սակայն առանց մյուսների նա չի կարող հասնել իր նպատակների իրագործմանը[4]: Քաղաքացիական հասարակության գործառության համար Կանտը կարևորում էր ազատությունը, հավասարությունը, ինքնուրույնությունը[5]:

Կ. Մարքսը քաղաքացիական հասարակությունը և պետությունը համեմատում էր թշնամի բանակների կամ էլ բարեկամ բանակների հետ: Իսկ Ա. Գրամշին քաղաքացիական հասարակությունը բնութագրում էր ոչ թե լիբերալ-ժողովրդավարական ընկալմամբ, այսինքն՝ կամավոր կազմակերպությունների և ՀԿ-ների բնագավառ, այլ առաջին հերթին որպես հանրային ոլորտ, որտեղ ընթանում է քաղաքական պայքար ձևավորված գաղափարների և համոզմունքների շուրջ[6]: Հա-

---

[1] Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», ՀՀ կառավարության 2014 թ. սեպտեմբերի 25-ի նիստի № 40 արձանագրային որոշում. հավելված 1, էջ 1:

[2] Տե՛ս «CIVICUS Civil Society Index Rapid Assessment: Armenia Country Report», Y., 2014, էջ 6:

[3] Տե՛ս **Ա. Ալեքսանյան,** Քաղաքացիական հասարակություն, «Քաղաքագիտություն» ուս. ձեռնարկ, Եր., 2006, էջ 312:

[4] Տե՛ս **Гегель Г.** Философия права. М., 1990, էջ 253:

[5] Տե՛ս **Кант И.** Сочинения в 6-ти томах. Т. 5, М., 1965, էջ 465:

[6] Տե՛ս http://www.powercube.net/other-forms-of-power/gramsci anhegemony/ 10.06.2018:

կամարտության ընթացքում մեկը դառնում է հաղթող և արձակում մյուսի բանակը: «Վերցրեք արտադրության, ապրանքափոխանակության և սպառման զարգացման որոշակի աստիճան, և դուք կստանաք որոշակի հասարակարգ, ընտանիքի, դասակարգերի որոշակի հարություն, մի խոսքով՝ որոշակի քաղաքացիական հասարակություն: Վերցրեք որոշակի քաղաքացիական հասարակություն, և դուք կստանաք որոշակի քաղաքական կարգ, որը քաղաքացիական հասարակության սոսկ դրսևորում է[7]»,-գրել է Կ. Մարքսը:

Այս առումով հարկ է նշել, որ քաղաքացիական հասարակության կայացման համար կարևոր նախապայման է օրենքի գերակայության սկզբունքը. ինքնակառավարվող և ինքնադրսևորվող մի հասարակություն, որը ղեկավարվում է օրենքով և ոչ թե մարդկանց կողմից, որոնք կարող են այն իրենց հայեցողությամբ մեկնաբանել, ինչպես նաև օրենքի կիրառման միջոցով ապահովել քաղաքակիրթ հասարակություն, որտեղ մարդը բարձրագույն արժեք է: Այսինքն՝ պետական և ոչ պետական կառույցների գործունեությունը պետք է ծառայի հասարակության շահերի և պահանջմունքների բավարարմանը՝ ապահովելով մարդու իրավունքների և ազատությունների գերակայությունը: Ըստ այսմ՝ հանրային կառավարման, դրա թափանցիկության ապահովման և զարգացման բնագավառում քաղաքացիական հասարակության դերի կարևորությունն աճում է ամբողջ աշխարհում[8]: Այս առումով հանրային կյանքի կազմակերպման և դրսևորման գործընթացներում առանցքային դեր են կատարում կամավորության և ինքնավարության սկզբունքով գործող ոչ կառավարական կազմակերպությունները: Հետևաբար, քաղաքացիական հասարակությունը ոչ պետական, շահույթ չհետապնդող հատված է, որի ինստիտուտներից են հասարակական կազմակերպությունները (այսուհետ՝ ՀԿ), արհմիությունները, մասնավոր ԶԼՄ-ները, պետական իշխանության մաս չկազմող կուսակցությունները, բարեգործական և կրոնական կազմակերպությունները, հիմնադրամները, համայնքային խմբերը, իրավաբանական անձանց միությունները, որոնք կարգավորվում են օրենքով, ինչպես նաև ոչ ֆորմալ (իրավաբանական գրանցում չունեցող) խմբերն ու շարժումները[9], որոնք գործում են օրենքի շրջանակներում՝ միավորումների և հավաքների ազատությունների և այլ դրույթների հիման վրա[10]:

Վերոշարադրյալից ելնելով՝ նշենք, որ քաղաքացիական հասարակության առկայությունը ժողովրդավարական հասարակարգի ձևա-

---

[7] http://kulturoznanie.ru/politology/ponyatiegrazhdanskogoobshhest/ 03.06.18

[8] Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 1:

[9] Տե՛ս «Defining civil society», http://web.worldbank.org/WBSITE/EXTERNAL/ TOPICS/CSO/0,,contentMDK:20101499~menuPK:244752~pagePK:220503~piPK:220476~theSitePK:228717,00.html, 04.04.2018:

[10] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 45, Եր., 2016:

վորման հիմքն է: Ոչ ժողովրդավարական հասարակարգի պայմաններում քաղաքացիական հասարակությունը չի կարող դրսևորվել, քանի որ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի՝ քաղաքացիների ակտիվ մասնակցությունը պետության կառավարմանը և նրանց ներգրավվումը քաղաքական որոշումների ընդունման գործընթացին տեղի են ունենում միայն քաղաքացիական հասարակության առկայության պարագայում: Ամբողջատիրական վարչակարգի պայմաններում իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ խմբի ձեռքում, մեկ միասնական գաղափարախոսությունը և բազմակարծության մերժումը բացառում են քաղաքացիական հասարակության գոյությունը, թեև կարող ենք այդ վարչակարգը դիտարկել որպես քաղաքացիական հասարակության ձևավորման և հետագա գործարկման համար անհրաժեշտ ինստիտուտների և զանազան հասարակական միավորումների ստեղծման ու կայացման փուլ: Հարկ է նկատել, որ ամբողջատիրական (օրինակ՝ ԽՍՀՄ) վարչակարգի պայմաններում հասարակական կյանքը վերահսկվում է իշխող վարչակարգի կողմից, և, բնականաբար, մասնակցության դրսևորման մասին խոսելն անիմաստ է. մարդու իրավունքներն ու ազատությունները դեկլարատիվ բնույթի էին, հասարակական միավորումների և շարժումների ինքնուրույն գործունեությունն անհնարին է, մրցակցությունն ու ազատ շուկայական հարաբերություններն իսպառ բացակայում են: Բնականաբար, քաղաքական կյանքին մարդկանց մասնակցությունը ժողովրդավարության անհրաժեշտ, բայց ոչ բավարար նախապայման է: Այնուհանդերձ, մարդկանց ազատությունն ու ինքնուրույնությունը, ինչ-որ գաղափարների շուրջ համախմբվելու և հանրային նշանակության որոշ խնդիրներ լուծելու ունակությունը, ինչպես նաև մասնավոր սեփականության և ազատ շուկայական հարաբերությունների ապահովումը, այն է՝ քաղաքացիական հասարակության գոյությունը, կարող են խթանել հասարակարգի՝ ժողովրդավարականից անցումը համախմբման փուլ:

Խորհրդային Միության փլուզումից հետո միջազգային կառույցները ձեռնամուխ եղան քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջոցով ժողովրդավարական հասարակարգը զարգացնելուն՝ հավատալով, որ ուժեղ քաղաքացիական հասարակությունը կնպաստի արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև քաղաքացիական մասնակցության և սոցիալական վստահության մեծացմանը: Սա ենթադրում էր աջակցություն ՀԿ-ների գործունեությանը և դրանց թվի ավելացում հետխորհրդային տարածքում, որից բացառություն չէր նաև Հայաստանը[11]: Հատկանշական է նաև այն, որ ՀՀ-ում անկախությունից հետո քաղաքացիական հասարակական կազմակերպությունների (այսուհետ՝ ՔՀԿ-ների) ձևավորման համար օրենսդրական լուրջ քայլեր ի-

[11] Տե՛ս **Ishkanian A.,** Reclaiming the emancipatory potential of civil society: a critical examination of civil society and democracy building programs in Armenia since 1991. Armenian review, 51 (1-4), 2009, էջ 9-34, ISSN 0004-2366:

րականացվեցին[12]: Մասնավորապես, 1996 թ. ընդունված «ՀԿ-ների մասին» ՀՀ առաջին օրենքով[13] ուժը կորցրած ճանաչվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության 1989 թ. հոկտեմբերի 30-ի՝ «Քաղաքացիների միավորումների կանոնադրությունները գրանցելու ժամանակավոր կարգի մասին» հրամանագիրը: Հետագայում ՔՀԿ-ների բնականոն գործունեությունը և կայուն զարգացումը ապահովելու, ինչպես նաև դրանց նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, պետական քաղաքականություն մշակելու գործում ՀՀ քաղաքացիների շահերը ներկայացնելու ու քաղաքացիական հասարակության կայացման նպատակով 2008 թ. ստեղծվեց ՀՀ հանրային խորհուրդը, որը խորհրդատվական և ապաքաղաքական մարմին է՝ ձևավորված ՀՀ քաղաքացիների, հասարակական միավորումների, Սփյուռքի ներկայացուցիչների կամավոր մասնակցության սկզբունքով: Առանձնապես կարևորելով Հանրային խորհրդի դերը երկրի հանրային կյանքում՝ կատարվեցին փոփոխություններ ՀՀ Ազգային ժողովի և կառավարության կանոնակարգերում. մասնավորապես՝ 2018 թ. մարտի 7-ին ընդունված ՀՀ օրենքը «Հանրային խորհրդի» մասին, որով այն իրավունք ստացավ հիշյալ մարմինների գործունեությանը մասնակցելու և դիրքորոշում հայտնելու[14]: Ի հավելումն վերոհիշյալի՝ նշենք, որ 2009 թ. ՀՀ կառավարությունը հավանություն տվեց «ՀԿ-ների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագծին (ընդունվել է 16.12.2016 թ.)[15]:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության տվյալների՝ ՀՀ-ում 2018 թ. հուլիսի 1-ի դրությամբ գրանցված էին 3954 ՀԿ[16], 1060 հիմնադրամ, 188 իրավաբանական անձանց միություն (ոչ առևտրային), 645 արհեստակցական և 49 կրոնական կազմակերպություններ[17]:

Հատկանշական է, որ ՔՀԿ-ները տնտեսական բարեփոխումների և երկարաժամկետ զարգացման համար սոցիալական համաձայնության հասնելու կարևոր դերակատարներ են, որոնք խթանում են պետական կառույցների արդյունավետ կառավարման թափանցիկությունը և հաշվետվողականությունը (ներառյալ կոռուպցիայի և անհավասարության դեմ պայքարը) և հասարակության մեջ վստահության և հանդուրժողա-

---

[12] Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգ», էջ 1:

[13] Տե՛ս «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, 22.10.1996:

[14] Տե՛ս «ՀԽ մասին» ՀՀ օրենք, 07.03.2018, http://publiccouncil.am/hy/legal-acts/ 01.04.18:

[15] Տե՛ս «ՀԿ-ների մասին» ՀՀ օրենք, 16.12.2016:

[16] ՀՀ-ում ՀԿ-ների գործունեության ուղղությունները կարելի է առանձնացնել ըստ հետևյալ ոլորտների՝ ժողովրդավարություն, իրավապաշտպան, կրթական, հաշմանդամների կարիքների, բարեգործական, կանանց հիմնախնդիրներով, տեղեկատվական, բնապահպանական:

[17] Տե՛ս http://moj.am/storage/files/legal_acts/legal_acts_1566526998981_stat_2017_2_. pdf (ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված կազմակերպությունների վիճակագրությունը 01.07.2018 թ. դրությամբ, հաշվետվություն), 21.08.2018:

կանության մթնոլորտ են ստեղծում[18]: Ըստ 2017 թ. Transparency International հակակոռուպցիոն կազմակերպության հրապարակած կոռուպցիայի ընկալման ինդեքսի՝ 180 երկրների համեմատ ՀՀ-ն 35 միավորով զբաղեցնում էր 107-րդ հորիզոնականը (*գնահատումը՝ 0-ից 100 բալային համակարգով, որտեղ 0-ն կոռուպցիայի ամենաբարձր մակարդակն է, իսկ 100-ը՝ ամենացածր)*[19]: ՀՀ-ում ձևավորված նոր՝ լեգիտիմ իշխանության ձգտումը՝ բացահայտելու կոռուպցիոն տարբեր սխեմաները հասարակական-քաղաքական կյանքի գրեթե բոլոր ոլորտներում, մեծապես կնպաստի ՀՀ վարկանիշի բարձրացմանը:

Մեր կարծիքով, այն երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակությունը դեռևս զարգացման փուլում է, նրա հետ փոխգործակցող կազմակերպություններից (իրավական, քաղաքական, սոցիալ-մշակութային, տնտեսական և այլն) յուրաքանչյուրի բարեփոխման համար որոշակի ժամանակ է հարկավոր: Այս տեսանկյունից տեղին է դիտարկել «Freedom House» կազմակերպության ժողովրդավարության ինդեքսի ուսումնասիրության՝ «Ազգերը անցումային փուլում» 2017 թ. զեկույցում ՀՀ օրինակը, որի միավորները հաշվարկվում են 7 ենթաինդեքսների հիման վրա. *1-ը ցույց է տալիս ժողովրդավարական առաջընթացի ամենաբարձր մակարդակը, իսկ 7-ը՝ ամենացածր.*

1) ազգային ժողովրդավարական կառավարում (6,00 միավոր),
2) ընտրական գործընթաց (6,00 միավոր),
3) քաղաքացիական հասարակություն (3,75 միավոր),
4) ԶԼՄ-ների անկախություն (5,50 միավոր),
5) տեղական ժողովրդավարական կառավարում (5,75 միավոր),
6) դատական համակարգի անկախություն (5,50 միավոր),
7) կոռուպցիա (5,25 միավոր)[20]:

Այդ ցուցանիշների հիման վրա երկրների քաղաքական վարչակարգերը դասակարգվում են՝ «համախմբված ժողովրդավարություն» (1.00-2.99 միավոր), «կիսահամախմբված ժողովրդավարություն» (3.00-3.99 միավոր), «անցումային կամ հիբրիդային վարչակարգ» (4,00-4.99 միավոր), «կիսահամախմբված ավտորիտար վարչակարգ» (5,00-5.99 միավոր), «համախմբված ավտորիտար վարչակարգ» (6,00-7,00 միավոր) կատեգորիաների[21]: Ըստ այդմ՝ ՀՀ-ում ընդհանուր ժողովրդավարության միավորը 5,39 է, այսինքն՝ կիսահամախմբված ավտորիտար: Այս առումով հույս կա, որ «Freedom House» կազմակերպության հաշ-

---

[18] Տե՛ս «Enabling environments for civic engagement in PSRP countries (ARVIN)». Social Development Notes. № 82. March 2003: https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/11319/279920PAPER0sdn82.pdf?sequence=1&isAllowed=y, 03.04.2018, էջ 3:

[19] Տե՛ս «Corruption Perceptions Index», https://www.transparency.org/news/feature/corruption_perceptions_index_2017 10.09.18:

[20] Տե՛ս «Freedom House 2017, Nation in Transit, Armenia», https://freedomhouse.org/report/nations-transit/2017/armenia,10.09.18:

[21] Տե՛ս «Freedom House 2017, Nations in Transit Methodology», https://freedomhouse.org/report/nations-transit-methodology, 10.09.18:

վարկած ենթահինդեքսները ՀՀ-ում տեղի ունեցած համաժողովրդական, ոչ բռնի հեղափոխությունից հետո հասարակական-քաղաքական կյանքի յուրաքանչյուր ոլորտում կատարվելիք համակարգային փոփոխությունների շնորհիվ աստիճանաբար կբարելավեն ցուցանիշները: Արդար, ազատ և թափանցիկ ընտրությունների միջոցով մենք կարող ենք ամրապնդել ներկայիս լեգիտիմ իշխանությունը: Նշենք, որ հենց ընտրություններն են հասարակական-քաղաքական կյանքում հիմնական խնդիր լուծողը, միայն արդար ընտրությունների միջոցով է հնարավոր կիրառել քաղաքական որոշումների ընդունման արդյունավետ և հանրօգուտ մեխանիզմ: Ընտրությունների միջոցով հասարակական-քաղաքական համակարգը ինստիտուցիոնալացվում, համալրվում է կրթված և մասնագիտական պատրաստություն ունեցող անհատներով, հետևաբար կադրային ճիշտ և հետևողական քաղաքականություն վարելուց է կախված համակարգի հետագա կայացումն ու արդյունավետ գործառությունը: Մեր երկրում նախկինում իրավիճակը և դրանից բխող բոլոր խնդիրները (կոռուպցիա, մենաշնորհային շահույթ, աղքատություն, գործազրկություն և այլն) շարունակաբար խեղված ընտրությունների հետևանք էին:

Ուշագրավ էր ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանի այն դիտարկումը, որ երկրում իրավիճակը վերջնականորեն լուծված չի համարվի, քանի դեռ արտահերթ ընտրություններ տեղի չեն ունեցել. դրա համար անհրաժեշտ էր ապահովել օրենսդրական և տեխնիկական համապատասխան պայմաններ՝ ընտրություններն ազատ և արդար կազմակերպելու և անցկացնելու նպատակով[22]: Այդ նպատակով ՀՀ վարչապետին առընթեր ստեղծվել էր ընտրական օրենսդրության (այսուհետ՝ ԸՕ) բարեփոխումների հանձնաժողով: Որոշման համաձայն՝ մշակվելու և վարչապետին էր ներկայացվելու ԸՕ բարեփոխումների հայեցակարգ, իրականացվելու էր դրա ազգային հանրային քննարկում[23]:

Ասվածից հետևում է, որ պետությունը պետք է շարունակի զարգացնել քաղաքացիական հասարակության նախադրյալներն այնպես, որ քաղաքացիական մասնակցության ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորումն ու հետագա զարգացումը դառնան գերակա: Այսպես, ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածը՝ «Իշխանությունը պատկանում է ժողովրդին», քաղաքացիական մասնակցության սահմանադրահիրավական հիմքն է[24]: Այս առումով քաղաքացիական մասնակցությունը դեկլարատիվ մակարդակից իրականի վերածելու համար հարկավոր է ստեղծել որոշակի մեխանիզմներ և ընթացակարգեր.

---

[22] Տե՛ս **Ն. Փաշինյան,** Հայաստանում ժողովրդավարությունը արդեն իրողություն է, www.aysor.am/am/news/2018/05/24/փաշինյան/1419418 24.06.18:

[23] Տե՛ս ԸՕ բարեփոխումների խորհրդարանական աշխատանքային խմբի նախանիստ, http://parliament.am/news.php?cat_id=2&NewsID=10462&year=2018&month=06&day=21&lang=arm, 24.06.18:

[24] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 45, Եր., 2016:

մասնավորապես՝ ներգրավվել այդ դաշտը կարգավորող իրավական-կազմակերպչական և օրենսդրական մշակման աշխատանքներին, որոնցից են ՔՀԿ-ների զարգացման ինստիտուցիոնալ և օրենսդրական բարեփոխումների հայեցակարգը, «ՀԿ-ների մասին» օրենքը, լեգիտիմ իշխանության առկայությունը և ժողովրդավարական ընտրությունների անցկացումը, հասարակություն-պետություն երկխոսությունը և համագործակցությունը խթանելու պատրաստակամությունը: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ քաղաքացիական մասնակցությունը համարվում է կայուն զարգացմանն ուղղված առանցքային գործոն, որի իրականացումը մեծապես պայմանավորված է քաղաքացիական հասարակության զարգացածությամբ և կայացածությամբ, հետևաբար քաղաքացիական մասնակցության դրսևորման ընթացքում առաջնային են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են պետության և քաղաքացիական հասարակության սուբյեկտների երկխոսությունը, նրանց համագործակցությունը, հասարակական-պետական հատվածի համագործակցային և փոխպայմանավորված գործունեությունը:

Այսպես, ՀԿ-իշխանություն սոցիալական արդյունավետ գործընկերությունը նպաստում է նյութական ռեսուրսների արդյունավետ բաշխմանը և օգտագործմանը, հնարավորություն է տալիս ուսումնասիրելու և հաշվի առնելու այս կամ այն խնդրի լուծման վերաբերյալ այլընտրանքային մոտեցումները: Հարկ է նշել, որ պետություն-ՀԿ համագործակցության մոդելի ձևավորումը դեռևս կայացման փուլում է: Այս տեսանկյունից ուշագրավ է Նաջալի առաջադրած կառավարություն-ՀԿ հարաբերակցության *«4C»* մոդելը, որի հիմքում ռազմավարական ինստիտուցիոնալ շահերի հայեցակարգն է: Հեղինակն առանձնացնում է 4 հնարավոր հարաբերություն՝ պայմանավորված այս երկու գործոնները նախընտրած քաղաքական նպատակների ու միջոցների համընկնել-չհամընկնելով[25].

1. համագործակցություն (*cooperation* – նման նպատակներ, նման միջոցներ),

2. բախում *(confrontation* – տարբերվող նպատակներ, տարբերվող միջոցներ),

3. փոխլրացում (*complementarity* – նման նպատակներ, տարբերվող միջոցներ),

4. կոոպտացիա (*cooptation* – տարբերվող նպատակներ, նման միջոցներ):

Նաջալը ներկա միտումների մասին նշում է, որ կառավարության և ոչ կառավարական ոլորտների միջև փոխգործակցությունը հետզհետե մեծանում է, սակայն դա չի ենթադրում նրանց նպատակների ամբողջովին համընկնում:

---

[25] Տե՛ս **Ս. Հ. Մանուսյան, Ն. Գ. Խաչատրյան,** Հասարակություն և հասարակական կազմակերպություններ. հարաբերությունների խնդիրներ և բարելավման ուղիներ, Եր., 2015, էջ 14-15:

Այսպես, ՀՀ-ում որոշ ՀԿ-ներ ազգային, մարզային կամ համայնքային որոշումներ կայացնելու, քաղաքականություն մշակելու գործընթացին մասնակցության փորձեր են կատարում: Այդ ՀԿ-ների մի մասն ամեն կերպ փորձել է մոտ գտնվել իշխանություններին՝ հայրենիքի զարգացմանը միտված տարբեր ծրագրերի իրականացման համար հատկացվող միջոցները սեփական շահերին ծառայեցնելու (օրինակ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի նախկին գործադիր տնօրենի չարաշահումները), կամ ստեղծված կապերն օգտագործելով՝ այդ շարքերում ընդգրկվելու համար («Հայաստանի երիտասարդական հիմնադրամ», «Բազե» և այլն): Հետևաբար, եթե անդրադառնանք Նաջալի 4 հնարավոր հարաբերություններին, ապա հստակորեն կարող ենք նշել, որ այժմյան կառավարության ձևավորման վրա էական ազդեցություն ունեցան քաղաքացիական մի շարք նախաձեռնություններ և շարժումներ[26]: ՀՀ-ում այս շարժումը հանգեցրեց քաղաքացիական մշակույթի կերպափոխմանը, և տարիներ շարունակ հասարակական լայն տարածում գտած «ոչինչ չի փոխվելու» սկզբունքը հօդս ցնդեց: Հայ երիտասարդությունը իր քաղաքացիական բարձր գիտակցությամբ և նպատակները իրագործելու քաղաքակիրթ և խաղաղ ճանապարհով ապացուցեց, որ հնարավոր է փոխել ամբողջ ազգի հոգեկերտվածքը, և իրենց շուրջ համախմբել ոչ միայն ՀՀ ժողովրդին, այլև Սփյուռքի մեր հայրենակիցներին: Համաժողովրդական այս շարժումը քաղաքացիական հասարակության կայացածության վառ ապացույց է: Ինստիտուտներից յուրաքանչյուրը, փոխգործակցելով հասարակական համակարգի (իրավական, սոցիալական, տնտեսական, քաղաքական և այլն) մյուս տարրերի հետ, կարողացավ ապահովել քաղաքակիրթ քաղաքացիական հասարակությանը հատուկ որակներ:

Նշենք, որ ՀԿ-ԶԼՄ համագործակցությունը ևս շատ մեծ նշանակություն ունի մասնակցության ինստիտուցիոնալացման գործընթացում, քանի որ հենց ԶԼՄ-ներն են ձևավորում հասարակական կարծիք, ապահովում հասարակության իրազեկվածության մակարդակ: ԶԼՄ-ների հետ արդյունավետ համագործակցության ճանապարհին լուրջ խոչընդոտ է լրագրողների մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակը: Ավելին, ԶԼՄ-ներն կարող են մեղմել հասարակության մեջ ՀԿ-ների նկատմամբ բացասական իմիջը: Իսկ որոշ դոնորներ մտահոգ են, թե ԶԼՄ-ները չեն ընդունում ՀԿ-ների կարևոր դերակատարությունը և նրանց գործունեությունը պատշաճ չեն լուսաբա-

[26] «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ղեկավար Ն. Փաշինյանը 2018 թ. մարտի 31-ին սկսեց Ս. Սարգսյանի պաշտոնավարման հնարավոր երրորդ ժամկետի դեմ պայքարը՝ «Իմ քայլը» նախաձեռնությամբ, որին միացան «Հանուն Հայաստան պետության» ճակատը և «Մերժիր Սերժին» երիտասարդական նախաձեռնությունը: ՀՀ-ում քաղաքացիական անհնազանդությունները դադարեցին մայիսի 8-ին ԱԺ-ում կայացած հատուկ նիստում՝ «ժողովրդի թեկնածուի» վարչապետ ընտրվելով (կողմ էր քվեարկել 59, դեմ՝ 42 պատգամավոր):

նում: Դոնորների կարծիքով են՝ քանի որ երկիրը փոքր է, տեղեկատվությունը կարող է հեշտությամբ տարածվել հասարակության մեջ ոչ միայն հեռուստատեսությամբ կամ մամուլով, այլև հանրային միջոցառումների միջոցով՝ հրապարակներում, տեղեկատվական թերթիկներ բաժանելով, համացանցով, և այլն[27]:

Հասարակական ոլորտի զարգացումը մեծապես կախված է նաև առանձին ՀԿ-ների համագործակցային և գործընկերային հարաբերություններից (ՀԿ-ՀԿ), որն ընդհանուր առմամբ ծավալվում է դոնորի կողմից ֆինանսավորված որոշակի ծրագրերի շրջանակում՝ հաճախ հենց նրա պահանջով կամ էլ որևէ ծրագրի շրջանակներում այլ կազմակերպության մասնագետի փորձագիտական աջակցության անհրաժեշտության դեպքում:

Հարկ է նշել, որ հայաստանյան ՀԿ-ների համախմբման և համագործակցության հիմնական խոչընդոտ էին ՀԿ հատվածում նյութական միջոցների սակավությունը և այն ձեռք բերելու անառողջ մրցակցությունը: Դա էր պատճառը, որ շատ ՀԿ-ներ մենաշնորհային դիրք ունեին՝ բացառելով մյուսների գործունեությունը: Քանի որ ՀԿ-ները ֆինանսավորվում են արտերկրից, հաճախ է շահարկվում այն տեսակետը, թե դրանց անդամները գործում են դրսի դրամաշնորհներով, ուստի՝ նրանց պատվերով: Այս առումով տեղին է նշել, որ ՀԿ-ներում սովորաբար ներգրավված են համեմատաբար ակտիվ երիտասարդները, և նրանց մեծ մասը հենց դրամաշնորհների միջոցով է լուծում կենսական շատ խնդիրներ, այդ թվում՝ իր զբաղվածությունը՝ ՀԿ-ն համարելով որպես հիմնական աշխատանք: Դա առաջին հայացքից դրական կարելի է համարել, բայց այս պարագայում նրանց քիչ է մտահոգում դրամաշնորհի այն պահանջները, որոնք միշտ չէ, որ կարող են բխել ազգային շահերից: Այսինքն՝ որոշ ՀԿ-ների նկատմամբ անվստահությունը պայմանավորված է նրանց՝ ոչ թե հասարակության շահերը ներկայացնող, այլ իշխանության գործառույթներ իրականացնող կազմակերպություններ լինելու հանգամանքով [28]: Այստեղից բխում է, որ մի շարք ՀԿ-ներ հիմնվում են երկու նպատակով՝ դրամաշնորհների միջոցով փող աշխատելու կամ իշխանություններին ծառայելու: Այդ պատճառով էլ ՀՀ-ում գրանցված ՀԿ-ների մեծ մասը չի համապատասխանում իր հիմնական առաքելությանը և հիմնականում զբաղված է ժողովրդավարական գործընթացներին նպաստելու իմիտացիայով:

Այսպիսով, ՀՀ հասարակական-քաղաքական շրջանակներում տիրող արատավոր երևույթները, օրեցօր ահագնացող համընդհանուր սո-

---

[27] Տե՛ս «Հայաստանի հասարակական կազմակերպությունների զարգացման հնարավորությունները և ռիսկերը», Եր., 2011, էջ 18, https://transparency.am/files/publications/NED_publication_arm_3.pdf, 10.09.18:

[28] Տե՛ս **Գ. Թադևոսյան, Ա. Չալոյան, Դ. Ղազարյան,** Քաղաքացիական ներգրավվածության և մասնակցության ինստիտուցիոնալացման հեռանկարները զարգացման ծրագրերի համատեքստում. Հայաստանյան փորձի վերլուծություն, Եր., 2008, էջ 65:

ցիալական դժգոհությունները, հանրության մեջ քաղաքական ինստիտուտների նկատմամբ անվստահությունն ու օտարվածությունը հանգեցրին համաժողովրդական շարժման նկատմամբ վստահության մեծացմանը և միասնականությանը: Տարիներ շարունակ ժողովրդական խոսույթում իշխող ձևակերպումները՝ «Ամեն ինչ որոշված է», «Մենք չենք կարող» և այլն, փոխարինվեցին «Մեկ բռունցք», «Մենք ենք մեր երկրի տերը», «Իշխանությունը դու ես» և այլ կարգախոսներով: ՀՀ հասարակական-քաղաքական համակարգում քաղաքացիական մշակույթը՝ որպես ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության կայացման կարևորագույն նախապայման, այսօր ձևավորել է կերպափոխման ամբողջական պայմաններ՝ ժողովրդավարական համախմբումը իրական հիմքերի վրա դնելու և կայացնելու համար:

Բանալի բառեր - *քաղաքացիական հասարակություն, քաղաքացիական մասնակցություն, ՀԿ-իշխանություն, ՀԿ-ԶԼՄ, ՀԿ-ՀԿ*

АРНАК САРГСЯН – *Вопросы институционального участия в гражданском обществе (на примере РА).* – В статье рассматривается роль гражданского общества в достижении социальной сплочённости, в эффективном управлении государственными учреждениями, в повышении их прозрачности и подотчётности. Формирование и дальнейшее развитие гражданского общества остаётся гарантией социальной и политической стабильности, которая обусловлена диалогом государства и субъектов гражданского общества, а также сотрудничеством и координированной деятельностью общественно-государственного сектора.

Ключевые слова: *гражданское общество, гражданское участие, НПО – власть, НПО – СМИ, НПО – НПО*

ARNAK SARGSYAN – *The Issues of the Participation Institutionalization in Civil Society (on the example of RA).* – The article examines the role of civil society in achieving social cohesion, manifestations of engagement, promoting transparency and accountability in the effective governance of governmental institutions. The formation and further development of civil society have been studied as a guarantee of the stability of society, which is conditioned with the cooperation and coordinated activities of the public-state sector by the dialogue of the state and civil society entities.

Key words: *civil society, civil participation, PO-authority, PO-Media, PO-PO*